

Պուրից, Ստիւգիենիցում բաւում էին մեծահոգակ տօնավաճառներ:

Հայերը բերում էին գորգեր թուրքիայից եւ Պարսկաստանից, ... Բուքովինայի հայերը... արեւելեան ապրանքների առևտուր են աւնում, ինչպէս գորգ»⁽²⁵⁾:

Դարձեալ յիշեցնեմ որ ընդարձակածաւալ նիւթ կայ Հայ առևտուրին եւ գաղթային պատմութեան համար զրեթէ Եւրոպայի ամէն կողմը, որ կը կարօտի յոգնեցուցիչ պրպտումի:

Յունաստանի մէջ ալ հայերը կարեւոր դեր մը ունին այսօր գորգի արտադրութեան մէջ: Իրաւ է, այս ուղղութեամբ Յոյներն ալ ձեռնբէցութիւն ունին, սակայն Հայոց դերն ու թիւը ճնշիչ մեծամասնութիւն կը կազմէր:

Կիպրոսի մէջ իսկ բարեսիրտ Ամերիկու՛ճի մը հայու՛ճիներու համար գորգի արհեստանոց մը կը հաստատէր ասկէ քանի մը տարի առաջ, հոն այդ արհեստին զարկ տարով:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ, ՄԻՋԱԳԵՏՔԻ, ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՒ ԲԱԲԵԼՈՆԻ ՄԷՋ

Նշանաւոր արեւելագէտ Ուալինսըն կը վկայէ. «Անցեալին մէջ Պարսկաստան նշանաւոր չէր հիւսուածեղէններու արտադրութեամբ: Հիւսելու եւ ներկելու արհեստները անտարակուսելիօրէն ի դորձ կը դրուէին (Պարսից) ենթակայ երկիրներուն մէջ, ինչպէս նաեւ հպատակ գաւառներու մեծագոյն մասին մէջ, եւ պարսկական ներկերը կ'երեւի որոշ համբաւ մը ունեցած են, բայց իրենց ոստայններուն մէջ ոչ մէկ արտադրութիւն կրցաւ անուն հանել օտար ազգերու մէջ»⁽²⁶⁾: Ուրեմն ներկելու եւ ոստայնանկելու պարսկական ներկայ համբաւը եկամուտ է հոն: Նոյն հեղինակութեան համաձայն Պարսկաստան կը ստանար «կապերտներ (կամ գորգեր) Բաբելոնէն եւ Սարգիսէն»⁽²⁷⁾:

Առ այժմ դժուար է ըսել թէ գորգի արհեստը ե՞րբ սկսաւ Պարսկաստանի մէջ, սակայն վերի վկայութեանց համաձայն՝ Քրիստոնէութենէ վերջ մուտք գտած է այդ: Պարսկաստանի մէջ արհեստները այս կանխագոյն շրջանին չէին զարգացած որովհետեւ տիրակալ այդ ժողովուրդէն տեսակ մը արհեստատեսացութիւն կար, ստորնացուցիչ կը նկատուէր զինուորական ասպարէզէն զատ ուրիշ որեւէ արհեստի հետեւիլ: Այդ պատճառաւ Պարսիկներէն նուաճուած ժողովուրդներ՝

(25) Պատմութեան Դասերից: Գրեց՝ Ա. Ահարոնեան: «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, 1932, էջ 71:

(26) The Seven Great Monarchies. — Vol. II, p. 419.

(27) Անդ, էջ 414: